

---

---

ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ. «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում. Դեվժիրմե. Երևան, հեղինակային հրատ., 2006, 179 էջ:

Դեվժիրմե կամ բռնի մահմեդականացման երևույթը կազմում է Օսմանյան կայսրության նկարագրի մի մասը՝ կրելով նրա ռազմաքաղաքական և թեոկրատիկ առանձնահատկությունների խոր կնիքը: Այն միաժամանակ արտացոլում է կայսրության հպատակ ժողովուրդների կեղեքման, իրավագրության ու խայտառակ հարստահարությունների իրողությունը, որ բնութագրական էր թուրքական նվաճողների և հպատակ ժողովուրդների փոխհարաբերությունների համար: Եվ վերջիններիս ծայրերը բացահայտելու, դրանց դարավոր պատմության մի հատվածի ուսումնասիրության համար գիտական ու ճանաչողական նշանակություն ունի սույն գիրքը: Չնայած մեզ՝ հայերիս նկատմամբ, որոնք Օսմանյան կայսրության հպատակներն են եղել, դեվժիրմեն կիրառվել է քանիցս և դրսևորվել որպես շարունակական սպառնալիք ազգային ինքնության դեմ, այս երևույթը զարմանալիորեն քիչ ուշադրության է արժանացել հայրենական պատմագրության կողմից: Այդ ակնբախ բացը լրացնելուն է կոչված Արտակ Շաքարյանի գործը՝ այս թեմայով առաջին ամբողջական և լուրջ ուսումնասիրությունը մեզանում: Պակաս կարևոր չէ աշխատության սուր հակադրությունը արդի թուրքական և արևմտյան այն ուսումնասիրողներին, որոնք կամ նվիրագործում են դեվժիրմեի անարգ երևույթը և կամ էլ ըստ ամենայնի հիմնավորում այն, իբրև օսմանյան հասարակության զարգացումն ապահովող դրական իրողություն՝ սոցիալական ստրատիֆիկացիայի գործոն, որը, իբր, ապահովել է կայսրության բոլոր հպատակների հնարավորությունների իրացումը՝ մասնակցելու երկրի կառավարմանը: Դեվժիրմեն, որը մարդկային խոր ողբերգություն էր ոչ մահմեդական անհատի և ազգերի համար, նրանք ներկայացնում են իբրև այդ նույն անհատի և հասարակության

զարգացման ու բարգավաճման աղբյուր: Գրքում հիմնավորապես հերքվում են նշված ձախող և հակագիտական տեսակետները: Աշխատությունն ունի թեմայի առանձնահատկություններից բխող կառուցվածք՝ սկսած դեվժիրմեի ձևավորման նախապատմությունից մինչև նրա ծավալման ընթացքն ու զարգացումը, դեվժիրմեի անցկացումից մինչև այդ համակարգի վարչական ու ռազմական կառույցների բնույթի և գործունեության հանգամանալի բացահայտումը (XV–XVIII դդ.):

Առաջին գլխում տրվում է դեվժիրմեի՝ որպես մահմեդական հասարակության մեջ մարդկային ռեսուրսների կառավարման ձևի քննությունը և, այնուհետև, դիտարկվում դրա ձևավորման հիմնահարցը: Հիրավի, պարտված հակառակորդների օգտագործումն իբրև ռազմական ուժ և պետական կառույցների կենսագործունեության միջոց, սկիզբ է առնում դեռևս խալիֆ Օմարի և ապա փոքրասիական սելջուկների ժամանակներից (մավլուքների և դուլամ համակարգի վաղ դրսևորումները): Օսմանները նրանցից ժառանգեցին մահմեդական հասարակության ընդերքում արդեն ձևավորված այս հաստատությունները՝ դրանց տալով սեփական ռազմական, վարչական ու իրավական-կազմակերպական սկզբունքների ձևը: Համոզիչ վերլուծությամբ ցույց է տրվում, որ դեվժիրմեից առաջ Օսմանյան կայսրության մեջ օրինականացված փենջիքը արդեն դրսևորվում էր երկու ուղղություններով՝ իբրև ռազմագերիների արժեքի մեկ հինգերորդ չափ, ինչպես և թվական հաշվարկով (մեկը՝ հինգի հարաբերակցությամբ) հարկվող շերիի հարկ: Սակայն օսմանյան նվաճողների շարունակ ընդլայնվող աշխարհագրությունն իր ծավալների համեմատ նոր բովանդակություն և ձևեր էր պարտադրում փենջիքի սկզբունքին: Ավատատիրական նոր հողատիրությունը կամ

ռազմալենային համակարգն առաջադրում էր շատ ավելի մարդկային ծավալուն ռեսուրսների պահանջ, քան ի վիճակի էր տրամադրել փենջիքը: Չնավորվում էր օսմանյան ռազմահողատիրական դասը (աւքերիներ), որը շահագրգռված էր ոչ թե ամայացնող գերեվարության կամ տնտեսական լիակատար քայքայման պահանջներով, այլ նվաճված հողերի մշակման համար անհրաժեշտ հողագործ բնակչության վերարտադրության խնդիրներով: Առավել նպատակահարմարը նվաճված ժողովուրդների կանտնավոր հարկումն էր՝ համալրելու պետության ռազմական ուժերն ու վարչաիրավական հաստատությունները՝ ազգաբնակչության մի մասը կանտնավորապես մահմեդականացնելու միջոցով: Այսպես կազմավորվեց և օսմանյան պետության հետագա շրջաններում ծավալվեց դեվժիրմեն, իբրև գերիններ կամ ստրուկներ հավաքելու ձև: Հեղինակը ճշմարտացի է ներկայացնում դեվժիրմեի բնութագիրը՝ որպես պետության իր ոչ մահմեդական հպատակներին հարաբերվելու յուրահատուկ միջոցի, որ հետամտում էր նաև վերջիններիս մշտական հնազանդության մեջ պահելու, օսմանյան լծի դեմ նրանց դիմադրական ոգին ու հնարավորությունները կոտրելու ուղղակի նպատակ:

Աշխատության մեջ փաստական հարուստ նյութերով ցուցադրվում է դեվժիրմեն գործողության մեջ, տղայահավաքի նախապատրաստման ու անցկացման կարգը, նրանց հսկողության և տեղափոխության եղանակները և այլն: Այս հատվածում բացահայտվում են օսմանների կողմից շերին խախտելու ուշագրավ երևույթներ: Նախ շերին անթույլատրելի էր համարում դուրանի հայտնությունից առաջ դեռևս հայտնի՝ Սուրբ գրքին հետևողների (զիմմիներ) բռնի մահմեդականացումը: Կնշանակի՝ հույներին և հայերին դեվժիրմե հարկելը շերին կանտնների ռոնահարում էր օսմանյան պետության կողմից: Ճիշտ նույնպիսի խախտում էր նաև բռնիացի մահմեդականներին դեվժիրմեի ենթարկելը, քանի որ, ըստ շերինի, չէր կարելի ստրկացնել մահմեդականին: Հեղինակն այս խնդիրն իմաստավորում է այն տեսակետից, որ օսմանյան նվա-

ճողական քաղաքականությունը ոչ միայն իր նվաճումներին էր ծառայեցնում շերին՝ իբրև հանրային իրավունք, այլև, հարկ եղած դեպքում, ռոնահարում էր այդ նույն հանրային իրավունքը՝ հանուն նվաճողական նպատակների: Այս գլխում բացահայտվում են դեվժիրմեի նոր շերտեր. քննարկելով դեվժիրմեի որակական կողմերը՝ տարբեր և անգամ հակասական փաստերի համադրումով հեղինակը համոզում է, որ օսմանները նախապատվությունը տվել են 14-20 տարեկան, թեև ֆիզիկապես կազմավորված, բայց աշխարհընկալման տեսակետից դեռևս փխրուն, ուրեմն և դաստիարակությանը տեղի տվող պատանիների հավաքագրմանը: Ուշագրավ է այն բացահայտումը, որ սուլթանները խախտում էին որոշ քաղաքներում մանկահավաք չանցկացնելու վերաբերյալ իրենց երբեմնի խոստումները: Բերվում է Մեհմեդ II-ի կողմից Անկյուրիայի հայերին դեվժիրմեի ենթարկելու հայտնի իրողությունը, երբ, ինչպես հիշատակարանում է նշված, «անօրէն արքան» մերժում է հայերին նախապես տրված «ազատության» թուղթը: Դրանով իսկ սուլթանը ռոնահարել է նախադեպի նորմը, որը, ի դեպ, հավակնում էր կայունության օսմանյան իրավական համակարգում:

Գրքում քննության է առնված դեվժիրմեի ժամանակ չարաշահումների և հավաքներից խուսափումների երևույթը, որի դեմ շարունակական, բայց ոչ արդյունավետ պայքար էր մղում պետությունը: Ցուցադրելով այս ասպարեզում պաշտոնյաների հոգեբանության և գործելակերպի մեջ խոր արմատներ նետած կոռուպցիան ու չարաշահումները, հեղինակը ի հայտ է բերում այդ որակները խթանող կարևոր պատճառներից մեկը՝ դեվժիրմե անցկացնելու իրավունքը վարձակալությամբ գնելու սկզբունքը: Առհասարակ վարձակալության իրավունքի վաճառքը (իլթիզամի ինստիտուտ) քաղցկեղի նման իր շոշափուկները տարածել էր կայսրության հողային ու դրամական հարաբերությունների բոլոր ոլորտները՝ դառնալով նրա ռազմատնտեսական անկման լուրջ պատճառներից մեկը: XVII դ. թուրք հեղինակ Կոչի բեյը այն որակում էր իբրև

երկրի տնտեսության (մասնավորապես կայսերական խասերի և մուքաթաաների) քայքայման ակնառու գործոն: Կապված մանկահավաքի հետ՝ հեղինակը տալիս է իլլիթիզմի հազեցած վերլուծությունը, բացահայտելով, որ այն նպաստում էր «քրիստոնյա երեխաների որսին», ինչպես և կոռուպցիայի խորացմանը դեվոլյուցիոնիստական: Դեվոլյուցիոնիստական նվազումը հեղինակն իրավացիորեն համարում է կայսրության ռազմական ուժի անկման, ինչպես և այն բանի հետևանք, որ ենիչերական գործառններն սկսեցին համարվել ենիչերիների զավակներով և թուրքերով: Քանակապես նշանակալի այս նոր ռեսուրսները պետք է բավականաչափ բավարարեին երիտասարդների պահանջարկը ենիչերիական գործառններում:

Դեվոլյուցիոնիստականների հետագա ճակատագրի հետ կապվող խնդիրները հետևողական քննության են առնվել վարչական ու կրոնաիրավական հիմնարկներում նախատեսվող ծառայության ռեզերվի՝ իչ օղլանների, ապագա ենիչերիների աջեմի օղլանների, ինչպես և հավաքագրվածների մի ստվար մասը կազմող սոսկական կուլերի տեղն ու դերը օսմանյան հասարակության մեջ: Այստեղ էական կողմերով ցույց է տրվում օսմանյան հին տոհմիկ ավագանու և աստիճանակարգով վեր բարձրացած դեվոլյուցիոնիստների (հավաքագրվածների) մրցակցությունն ու հակադրությունը իշխանության ասպարեզում: Իրենց՝ ենիչերիական գործառնների այլասերման գործընթացը հեղինակը ի հայտ է բերում գավառներում նրանց անսանձ կամայականությունների ու անվերահսկելիության, ամուսնանալու արգելքը ռոնահարելու, ինչպես և առևտրի ու արհեստների ասպարեզը ներթափանցելու իրողություններով: Բսկապես, հենց միայն այն հանգամանքը, որ քափըքուլու համակարգի մարդիկ հատկապես թույլ սուլթանների ժամանակ դառնում էին պետության իրական ղեկավարները, սրանց արդեն բնութագրում է իբրև կայսրության ինքնարավոլությունը խարխուղ գործոնի:

Առանձնապես արժեքավոր ենք համարում դեվոլյուցիոնիստական ստվար խմբի ստրուկտուրայի ճակատագրի բացահայտումը,

իբրև համեմատաբար քիչ պարզաբանված բնագավառի: Ընկնելով հասարակության ամենաստորին դասի մեջ, նրանք դառնում էին առուծախի առարկա, աշխատում իբրև ստրուկներ տներում, թիմարներում, չիֆթլիքներում: Միանգամայն հիմնավորված է հեղինակի եզրակացությունը, որ այսպիսով, դեվոլյուցիոնիստները էր ոչ միայն օսմանյան ռազմական ու վարչական համակարգի վերարտադրման, այլև աշխատանքի տարածքային վերաբաշխման նպատակով:

Աշխատության ուշագրավ հատվածներն է հայերի նկատմամբ դեվոլյուցիոնիստները ոչ ընդարձակ, բայց բնութագրական և տպավորիչ քննական ակնարկը, որ ցուցադրում է օսմանյան անագործային լծի մի դրսևորումը մեր ժողովրդի պատմական անցյալում: Բալկանների հետ համեմատած՝ Հայաստանում մանկահավաքների նվազ քանակը Ա. Շաքարյանը հիմնավորում է այնպիսի գործոններով, ինչպես ասիական նահանգներում կայսրության ավելի հուսալի վիճակը, քուրդ ավատատերերի ռազմական ուժի օգտագործումը նրա կողմից: Անդրադառնալով հայագրի դեվոլյուցիոնիստներին, հեղինակը հիշատակում է եղբայրներ Մեհմեդ և Հալիլ փաշաներին. վերջինս քառակի գրադեցրել էր մեծ վեզիրի պաշտոնը (XVII դ. առաջին կես), իսկ նրա եղբայրը հասել էր բեյլերբեյի աստիճանի: Հեղինակի զուսպ մոտեցումն այս հարցին ակններ է և հասկանալի. շատ սակավ բացառություններով, նրանք անդարձ կորած են եղել իրենց ծնող ժողովրդի համար, այնպես, ինչպես մեծ վեզիր Սուլեյման փաշան (XVII դ. 50-ական թվականներ), նրա ժամանակակից Հասան (Հուսեյն) աղան՝ Ստամբուլի մաքսատան գլխավորը (Էմին), որը համբավված մեծահարուստ Անդոն չելեպիի եղբայրն էր: Ենիչերական (հավանաբար՝ աջեմի օղլանների) միջավայրի մեջ էր թրծվել նաև հայագրի Մինանը՝ Օսմանյան Թուրքիայի այդ մեծագույն ճարտարապետը:

Հեղինակը տրամաբանական ավարտի է հասցնում իր գիտական հետազոտությունը՝ լուսաբանելով մանկահավաքների դանդաղ ու տևական վախճանի ընթացքը՝ ներհուսված օսմանյան ավատատիրական հասարակության զարգացումներին:

Հիմնահարցի լուծման համոզությամբ և գիտական նորություններով աշխատությունը զգալի ներդրում է հայրենական արևելագիտության մեջ: Այս որակներին հեղինակը հասել է օգտագործած հարուստ սկզբնաղբյուրների, բնագրային իմացության, թեմային առնչվող օտարալեզու և հայ գրականության հմտալի օգտագործմամբ: Թերևս, կարե-

լի էր անել մի երկու դիտողություն, ինչպես հայկական նյութի փաստական կողմը կարիք ունի փոքր-ինչ հարստացման կամ աշխատության մեջ առկա լեզվական որոշ մեղանչումներ: Ասվածը, սակայն, չի ստվերում գիտական այն լուրջ աշխատանքը, որ կատարել է Ա. Շաքարյանը՝ դեվժիրմեի հայրենական հետազոտության բնագավառում:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ